

20.06.2016թ.

ժ.11:00

Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Ա.Սաֆյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխարհակազմի ղեկավար), Վ.Մարոյան (իրավաբանական բաժնի պետ), Լ. Խաչատրյան (մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ), Կ.Կույունջյան (մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ), Ա. Մարտիրոսյան (տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ), Կ.Եսայան (տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ մասնագետ), Ս. Շախգելյան (տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ):

Օրակարգի նախագծում հինգ հարց.

1.«Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության որակի քաղաքականությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

3. «Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման կարգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Մարոյան/

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2016 թվականի մայիսի 17-ից 20-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Եվրոպական ազատ առևտրի ընկերակցության, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, Եվրոստատի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված «Ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի» 15-րդ նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Խաչատրյան/

4.2. Հաղորդում Իսպանիայի Մադրիդ քաղաքում մայիսի 31-ից հունիսի 3-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) և Իսպանիայի ազգային վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված «Որակի կառավարումը վիճակագրությունում՝ իրականացման ճանապարհը» և «Որակը պաշտոնական վիճակագրությունում» խորագրով Եվրոպական կոնֆերանս (Q2016) աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան/

4.3. Հաղորդում Լյուքսեմբուրգ քաղաքում 2016 թվականի հունիսի 2-ից 3-ը «Բնակչության վիճակագրության հարցերով» աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կույունջյան/

4.4. Հաղորդում Վրաստանի Բաթումի քաղաքում 2016 թվականի հունիսի 6-ից 10-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ և Եվրոպայի շրջակա միջավայրի գործակալության /ԵՇՄԳ/ կողմից կազմակերպված «Եվրոպայի շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի զարգացմանը» նվիրված խորհրդակցությանը և Եվրոպայի բնապահպանության նախարարների «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» 8-րդ խորհրդաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/

4.5. Հաղորդում Ղազախստանի Աստանա քաղաքում 2016 թվականի հունիսի 6-ից 10-ը «Դեվի-նֆո 6.0-Օգտվող և Կառավարող» խորագրով դասընթացին և «Արմենիա-նֆո» տեղեկատվական համակարգի ներդրման Հայաստանի փորձը ներկայացնելու աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Վ. Դավթյան, Ա. Մարտիրոսյան, Կ. Եսայան, Ս. Շախգելյան/

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
/Քվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թվականի նոյեմբերի 9-ի թիվ 37-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը:
/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

1. ՀՀ ԱՎԾ աշխատակազմին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված Կառավարական 2-րդ մասնաշենքի 206.9 քմ մակերեսով 10,794,000 դրամ սկզբնական արժեքով շենքը հանել աշխատակազմի հաշվեկշիռից:

2. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի հաշվեկշիռ մուտքագրել սույն որոշման մեջ նշված հանձնման-ընդունման արձանագրություններով ստացված ընդամենը 2,018,750 դրամ արժեքով համակարգչային տեխնիկան:

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2009թ.-ի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի պետական կառավարչական հիմնարկին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին» թիվ 37-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին տողի «21637.0» թիվը փոխարինել «10842.2» թվով, 2-րդ տողի «441376.6» թիվը փոխարինել «443395.3» թվով, ընդամենը տողի «656763.4» թիվը փոխարինել «647987.3» թվով:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության որակի քաղաքականությունը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Սաֆյան/

Որոշեցին՝

հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության որակի քաղաքականությունը՝ համաձայն հավելվածի:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

3. «Վիճակագրական տեղեկությունների հավաքագրման կարգը հաստատելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ.Սարգսյան/

Որոշեցին՝

1. Հաստատել վիճակագրական տեղեկությունների հավաքագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003թ.-ի հոկտեմբերի 3-ի «Վիճակագրական տեղեկությունների ներկայացման կարգը հաստատելու մասին» N 11-Ն որոշումը:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2010թ.-ի մայիսի 12-ի «Վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից էլեկտրոնային փոստով վիճակագրական փաստաթղթերի Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն ներկայացման կարգը և համաձայնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 12-Ն որոշումը:

4. Սահմանել, որ մինչև սույն որոշման ուժի մեջ մտնելը կնքված վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից էլեկտրոնային փոստով վիճակագրական փաստաթղթերի Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն ներկայացման համաձայնագրերը շարունակում են իրենց գործողությունը:

/Նորմատիվ/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2016 թվականի մայիսի 17-ից 20-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Եվրոպական ազատ առևտրի ընկերակցության, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, Եվրոստատի և Տնտեսական համագործակցության և զարգացման

կազմակերպության կողմից կազմակերպված «Ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի» 15-րդ նիստին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Լ.Խաչատրյան/

4.2. Հաղորդում Իսպանիայի Մադրիդ քաղաքում մայիսի 31-ից հունիսի 3-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) և Իսպանիայի ազգային վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված «Որակի կառավարումը վիճակագրությունում՝ իրականացման ճանապարհը» և «Որակը պաշտոնական վիճակագրությունում» խորագրով Եվրոպական կոնֆերանս (Q2016) աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Ս.Մասցականյան, Ա.Սաֆյան/

4.3. Հաղորդում Լյուքսեմբուրգ քաղաքում 2016 թվականի հունիսի 2-ից 3-ը «Բնակչության վիճակագրության հարցերով» աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Կ.Կույունջյան/

4.4. Հաղորդում Վրաստանի Բաթումի քաղաքում 2016 թվականի հունիսի 6-ից 10-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ և Եվրոպայի շրջակա միջավայրի գործակալության /ԵՇՄԳ/ կողմից կազմակերպված «Եվրոպայի շրջակա միջավայրի միասնական տեղեկատվական համակարգի զարգացմանը» նվիրված խորհրդակցությանը և Եվրոպայի բնապահպանության նախարարների «Շրջակա միջավայր Եվրոպայի համար» 8-րդ խորհրդաժողովին մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցող՝ Յու.Պողոսյան/

4.5. Հաղորդում Ղազախստանի Աստանա քաղաքում 2016 թվականի հունիսի 6-ից 10-ը «Դեվիանֆո 6.0-Օգտվող և Կառավարող» խորագրով դասընթացին և «Արմենիանֆո» տեղեկատվական համակարգի ներդրման Հայաստանի փորձը ներկայացնելու աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Զեկուցողներ՝ Վ. Դավթյան, Ա. Մարտիրոսյան, Կ. Եսայան, Ս. Շախգելդյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ